Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի օգոստոսի 22-ի N 1392-Լ որոշմամբ հաստատված՝ «Մթերատվության բարձրացման փորձնական ծրագրի» շրջանակներում նախատեսվում է պետական աջակցություն ցուցաբերել կովերի արհեստական սերմնավորման գործընթացին՝ յուրաքանչյուր սերմնավորման համար փոխհատուցելով 10 հազար դրամ (5 հազար դրամը կվճարի անասնատերը):

Ծրագրի համաձայն, ՀՀ Գեղարքունիքի մարզում նախատեսվում է 2025 թ.-ին սերմնավորել 3500, իսկ 2026 թ.-ին՝ 4650 կովեր:

2025 թ.-ին մարզում նախատեսվող սերմնավորման ենթակա կովերի թիվը՝ ըստ համայնքների

Համայնք	**Կովերի թիվը՝ 01.01.2024թ.-ի դրությամբ**	**2025թ-ին սերմնավորվող կովերի թիվը**
Գավառ	6658	680
Սևան	5216	530
Մարտունի	9647	990
Վարդենիս	7739	790
Ճամբարակ	4957	510
Ընդամենը	**34217**	**3500**

2025 թվականին մարզում կովերի արհեստական սերմնավորումն իրականացնելու նպատակով ընդունվում եմ հայտեր սերմնավորման ծառայություններ մատուցող կազմակերպություններից:

Ելնելով վերոգրյալից 10 աշխատանքային օրվա ընթացքում, մասնակցության վերաբերյալ հայտը էլեկտրոնային տարբերակով միաժամանակ կարող եք ներկայացնել և՛ մարզպետի աշխատակազմ, և՛ համայնք կամ բնակավայր՝ կցելով ծրագրի 11-րդ կետի 4-րդ ենթակետով /արհեստական սերմնավորում իրականացնող իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը (այսուհետ՝ կազմակերպություն), որոնք՝ ա. ունեն տվյալ ոլորտում գործունեություն իրականացնելու առնվազն մեկ տարվա փորձ և համապատասխան գործունեությամբ զբաղվելու հավաստագիր ունեցող մասնագետներ, բ. ունեն վարկային դրական պատմության վերաբերյալ զեկույց, որի համաձայն, ըստ ԱՔՐԱ տեղեկատվության համակարգի, դիմումի ներկայացման օրվան նախորդող 12 ամիսների ընթացքում չեն ունեցել գումարային 60 օր և ավելի ժամկետով ժամկետանց վարկային պարտավորություններ, գ. ունեն բարվոք հարկային պատմության վերաբերյալ տեղեկանք, որի համաձայն հայտի ներկայացման օրվան նախորդող 12 ամիսների ընթացքում չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ վարչական վարույթ հարուցված չէ, կամ չունեն ժամկետանց հարկային պարտավորություններ (հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով չկատարված պարտավորություններ) և 19-րդ կետով պահանջվող փաստաթղթերը /. Բարձրորակ սերմնահեղուկը պետք է ստացված լինի 2015 թվականից հետո և ներկրված՝ 2023 թվականին կամ դրանից հետո, որոնց վերաբերյալ կազմակերպությունը պետք է ներկայացնի սերմնահեղուկի ծագման հավաստագիր, սերմնահեղուկի ձեռքբերման և տեղափոխման վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր:/ :